ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԿԱՆԳ ԱՌ ԴՈՒ ՄԻ ՊԱՀ

Կանգ առ դու մի պահ, սիրելի եղբայր,
Տկար եղբայրըդ ասելիք ունի:
Դու մի՛ շտապիր կանգնել գլխիվայր,
Օ՛, այդ վիճակը վտանգներ ունի...
Քո շրջուած պահին, թէ մարդ մօտենայ,
Քեզ՝ գլխիվայրիդ, այնպէս կը թըւայ
Թէ հիմա, հիմա քեզ կը տրորի,
Քանզի գըլուխդ՝ մօտն է ոտքերի:
Ու ամեն մէկին կը տեսնես շրջուած,
Կը տեսնես նրանց գլխիվայր կախուած...
Եւ կը պարսաւես նրանց դու ի զուր,
Թէ ինչո՞ւ այդպէս, թէ՛ մեծ, թէ՛ պուճուր,
Արագ անցնում են, մօտիցըդ գնում,
Բայց դու այդպէս էլ տեղում ես մնում:
Որ բոլոր մարդիկ շրջուել են մէկից,
Խօսքը մէկ արած՝ նայում են վերից:
Որ միայն դու ես շիտակ վիճակում,
Իսկ մնացածը՝... չեն շտկուի կեանքում:
Քեզ կը թըւայ, թէ նրանց պատճառով,
Նրանցից լսած անիմաստ ճառով
Առաջ չես գնայ, ինչքան էլ փորձես,
Չեն գնահատի, ինչքան էլ գործես:
Այդ բոլոր մարդիկ կ'անցնեն կը գնան,
Քանզի քայլում են նրանք ոտքերով,
Իսկ դու այդպէս էլ տեղում կը մնաս,
Եթէ գլխիվայր վիճակում կենաս:
Քանզի գլխով են մարդիկ մտածում,
Ոտքով՝ մաս գալիս, նոյնիսկ՝ կաքաւում,
Իրենց սեփական մեղքը չեն թողնում,
Հարեւանների մեղքերը «քաւում»...
...Դե՛հ, բաւական է, շրջուիր դու կրկին,
Կանգնիր ոտքերիդ, նայիր երկնքին...
Յիսուս Քրկիչդ կանչում է նորից,
Սիրով կ'ընդունի, նա թանկ է մօրից:
Հոգիդ կը փրկես այդպէս անելով,
Մեղքի աշխարհը քեզնից վանելով,
Դէպի Յիսուսիդ բաց գիրկը գնայ
Եւ նրա խոցուած ձեռքերում մնայ...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@